

**Տ. ԲԱԳՐԱՏ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱԼՍՏԱՆՅԱՆԻ
ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ՈՒԽՏԻ ՊԱՏԱՐԱԳԻ ՔԱՐՈԶԸ
ԽՈՍՎԱԾ Ս. ԷՇՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱճԱՐՈՒՄ**

(24 հունիսի 2003 թ.)

«Ուր եսն եմ, անդ եւ պաշտօնեայն իմ եղից»:
(Տովի. ԺԲ 26)

Այսօրվա ավելքարանական ընթերցվածքը կարծես թե ուղիղ կերպով համադրվում է իմ կյանքի ուղու հետ, որ իր հանգուցալուծումն է գդնում այս Իջման Ս. Խորանին: Մեր Տերն ասում է. «ուր որ ես եմ, այնքեն թռող լինի նաև իմ պաշտօնյան»: Երբ մի հերքադարձ հայացք եմ ներում, թե ինչ ճանապարհով անցանք և ինչպես անցանք, ուզում եմ հավաքալ, որ այս խոսքը նաև մեզ համար էր ասված, և փորձեցինք՝ ուր որ Նա է, ուր որ մեր Տերն է, մենք էլ փորձեցինք այնպես լինել, որպինքն ընդհանրապես առաջինն ինքն է, որ մեր կողքին լինում է, մեր մեջ լինում է, բայց շատ հաճախ բացակայություն մերն է, որ չենք կարողանում Տիրոջն ընդունել մեր կողքին, Իր ներկայությունը զգալ: Մեր անցած ամրող ճանապարհի ընթացքում՝ հանգրվան՝ Նոգևոր Ծեմարանում և ուսումնառության ավարտից հետո և դարբեր զանազան հանգամանքներում ցանկացանք լսել այդ խոսքը և փորձեցինք լինել այդ խոսքին համաձայն, թե՝ «ով իմ պաշտօնյա, դու ևս իմ կողքին եղիր»: Գևորգյան Ծեմարանի հարկից ներս որպես ուսանող, խարիսափող ուսանող, երիխասարդ մեկը, որ կյանքի լավն ու վարդ դեռ չգիտի, առաջին իսկ պահից ունկնդիր եղանք այդ վերին պարզամին, թե՝ «ուր որ ես եմ, այնքեն իմ պաշտօնյան է լինելու», և այդ պաշտօնյան պարզ կյանքի, գործի, գործարանի պաշտօնյա չէ, այլ այդ պաշտօնյան կյանքի համար հոգիներ որսացող պաշտօնյա է և հերքնաբար՝ «եթե կուզես՝ Վերցրո քո խաչը և եկ իմ եղիսից» (հմմդ. Մվթ. ԺԲ 21):

«Նազարենվեցինք այդ ձայնին, ունկնդիր եղանք այդ ձայնին, անկումներով, վերելքներով շարունակեցինք մեր կյանքը և ապա նոր հանգրվանների առջև, զանազան պարապախանակվությունների առջև, մարդկանց հետ հարաբերության մեջ միշտ փորձեցինք լսել այդ խոսքը՝ «Ես այսքեն եմ, և դու ևս այսքեն եղիր»: Այս խոսքի քաղցրության զգացումը կիմանան նրանք, ովքեր գնացել են այդ ճանապարհով, ովքեր պաշտօնյա լինելու, ծառայող լինելու զգացումով են գնացել Տիրոջ եղիսից: Բազում առիթներով ասել ենք ու ասելու ենք՝ մեր Եկեղեցին գործարան չէ՝ ոգի արվադրող, ոգի որսացող հասպառություն է, մարդկանց վերջնական կյանքի ճանապարհը ցոյց տվող հասպառություն է, բոլոր ինչուների պարապախանող հասպառություն է, և հարցական չկա մեր Եկեղեցու կյանքից ներս: Մենք կոչվեցինք առաջացող հարցականների լուծումները դրվող միջոցներից մեկը լինելու, կոչվեցինք բարձրագույն ծառայության՝ եպիսկոպոսության աստիճանի՝ եկմք ունենալով այն անցած ամրող ճանապարհը, որի մեջ ամեն անգամ, ամեն պարապախանակվության մեջ լսել ենք

այդ ձայնը և այսօր հաստաբում ենք, որ ցանկացանք լինել, ով Տեր, այնքեղ, որպես Դու ես:

Մեր հարաբերության մեջ ճնշում չկա, այլ ազարություն կա, մեր հարաբերության մեջ երկխոսություն կա և, ով Տեր, երբեք չենք փորձի Քեզ վասող լինել: Այս սուրբ Վայրկյանին կա և, ով Տեր, երբեք չենք գործություն կա, մեր հարաբերության մեջ առաջինք, կյանքի հանգուցալուծման այնպիսի պահի ենք հանդիսական միմյանց, որ պետք է Աստվածածին և մարդ զայսի, իրար ենք են ծովում, խսկապես պաշտոն կարգող և պաշտոնյա՝ իմ սիրով լցված է միայն վաստականությամբ և երախրագիշբությամբ և որքան էլ որ խոսքեր ասեմ, որքան էլ որ վերլուծումներ փորձեմ անել՝ դիմար և կիսար կմնան, որովհետք այս Վայրկյանը խոհափիխտոփայական կամ աստվածաբանական խորքերի մեջ մդնելու վայրկյան չէ, այլ վաստականության վայրկյան և շնորհակալության:

Եվ, եեւուսարար, առաջին իմ վատքը և գոհությունը Ասքծուն է, որ ամեն անգամ մեզ բարձրացնում է այնպիսի ասպիհանների, որոնց առջև մենք դարսակուսած ենք և ապշած: Առաքելական մեր պաշտոնը, որ դրվել է այսօր ինձ, իմ դիմար անձին, երեշպակների բարձրագույն պաշտոն է, որ դրվել է ինձ, և դրանք փորձելու ենք կրել արժանավորապես և կրել այնպիս, որպեսզի ոչ Ասքծու անունը նգովվի մարդկանց կողմից և ոչ էլ այն պաշտոնակից ներայինների անունը, որոնք խորը ծառայության մեջ են Ասքծու վատքի և իր խոսքի ծավալանը:

Երկրորդ խոսքը շնորհակալության իմ ընդանիքինն է, որ այս ծառայության ամբողջ ընթացքում, որևէ վայրկյան խաթարող չեղան, չմասնակցեցին իմ կյանքին իրենց անձնական ցանկություններով և ձգութանքով և մեկ կողմ քաշված աղոթքով եեւուսեցին:

Երրորդ շնորհակալության խոսքս ուղղում եմ բոլոր նրանց, որոնց ենք ճանապարհ ենք անցնել, որոնց ենք աղոթակից ենք ենել, իաց ու աղ ենք կիսել և այդ ճանապարհին հապկապես ուղղում եմ շեշտել ինձ համար շաբ հարազարդ հաստաբություն՝ Գևորգյան Հոգևոր Ծեմարանը իր բոլոր դիմարական կազմներով, որոնք ավանդ ունեն մեր կյանքի մեջ, բոլոր պաշտոնյաները: Եվ հարկապես ուղղում եմ շեշտել ու կրկնել՝ կյանքին լավագույն հանգըրվաններից մեկը՝ Սևանի Վազգենյան Դպրանոցը, որպես փորձեցի ես ինքս ինձ դիմունել, որպես փորձեցի դիմունել մեր Եկեղեցու ապագան և որպես ցանկացած դիմունել հանձնառու կամքով լցուն մարդիկ, երիտրասարդներ, որոնք այսօր ոչ թե իրենց երիտրասարդական ավյունին ու ցանկություններին են ուղղում հազորդ դրա, այլ ցանկանում են իրենց երիտրասարդական մրգի միջից ծառայել այս ժողովրդին և Ասքծուն, դիմունել իրենց կյանքի ճանապարհը, գաղափարական ճանապարհը ծառայության միջոցով և իրենց կյանքը դնել այս ժողովրդի գոհասեղանին: Դա իմ ինքս ինձ դիմունելն էր:

Ես ցանկացա, որ նրանք էլ այդպիսին լինեն, որքանով է հաջողվել կամ չի հաջողվել դա, Աստված զիրք և իրենք: Բայց այդ դրությունը, Վազգենյան դրություն ինձ համար հարազարդ և կյանքին ամբողջ ընթացքում կրենի մի հաստաբություն է լինելու: Եվ այսօր նրանք է, որ այս Ուխտի Պատարագին Աստված իրենց շրթունքների վրա առած ողջունում են մեզ, աղոթք են բարձրացնում մեր եեւուսագայի համար, և Վարդան եմ, որ շաբ կարծ ժամանակահարվածում նրանցից շաբերի ենք լինելու ենք պաշտոնակից, և նրանցից շաբերը ևս լսելու են այս ձայնը. «Ուր եսն եմ, անդ ևս պաշտօնեան իմ եղիցի»:

Իմ գոհությունը և շնորհակալությունը բոլոր իմ միաբան եղբայրներին, ավագ սերնդի, միջին սերնդի, իմ քարեկիցների, և ընդհանրապես բոլոր միաբաններին և հարկապես կուզելմ շեշտել այս փաճարի լուսարարասպեկտության շարքը սրբանձնած անձանց՝ մեր հոգևոր հայրը եղած Հուսիկ Սրբազնին և նաև այսօրվա իմ հոգևոր եղբայրը՝ Արքակ Հայր Սուրբը, որ այսքան պայծառ, այսքան շեն է պահում այս Մայր Տաճարը, որպեսից մենք, այս Լուսի փաճարից հոգևոր լույս ենք սիրանում և սփռում ենք մեր ժողովորդին:

Եվ հաջորդը աղոթքի խոսքեր են, գոհության խոսքեր են, հիշապակի խոսքեր են երկու պարզվական շիրիմներին, որոնք երբեք ու երբեք քարի կողմից գրկված չեն եղել, անշնչացած չեն եղել. դա մեր առջև Հոգևոր Ճեմարանի դրաները բացող Վազգեն Առաջին երջան-կահիշապակ Կաթողիկոսն է և երկրորդը՝ իմ հոգևոր ծնողը՝ Գարեգին Առաջին Կաթողիկոսը, ով արժանի լրեսավ մեզ որպես երիվասարդ բարձրացնելու այս Սուրբ Սեղանի սպասավորության: Նրանք իրենց կյանքը փվեցին, այրվեցին, բայց չսպառվեցին և թողեցին մեզ այդ զործը շարունակելու, և Աստված թող օրինի մեր ճանապարհը նաև իրենց հիշապակի համար:

Հաջորդը մեր ժողովուրդն է, բոլոր նրանք, ովքեր աղոթակից եղան, խրախուսող եղան, ուղեկցեցին մեզ, դժվար օրերին մասմակից եղան, ուրախությունները կիսեցին և մեկ գործի համար՝ այս Եկեղեցու շինության համար, այս Եկեղեցու պայծառության համար, իրենց իսկ անձերի պայծառության համար, և դրա համար անսահման շնորհակալություն բոլոր նրանց, որ որ է զգնվեն:

Իմ շնորհակալությունը հարկապես Կանադահայոց թեմի աշխարհական և հոգևոր անձանց, որ Վստահություն ունեցան իմ անձի համեմատ, Վստահեցին ինձ և ցանկացան, որ ես իմ գլուխ անձով լինեմ իրենց առաջնորդ: Սա Վստահության հարց է, ոչ ճայնի, ոչ ցանկության, ոչ նախասիրության: Եվ դա ամեն մի հոգևորականի համար արժեք է, երբ իր հոգը, իր ժողովուրդը մինչև հեռավոր Վայրերը Վստահում է իրեն: Եթե մենք չվստահենք, Վստահություն չունենաք կյանքում, կյանքը մեծ իմաստով թերի կլինի, և կանադահայության կյանքում ծառայելու համար, ուզում եմ այս Սուրբ Սեղանի առջև հարկապես իրենց շնորհակալության և երախսիքի խոսք ասել և ինչպես բազում առիթներով ասել ենք, մեր կյանքը թող զղոսմի կյանք չլինի:

Վեջում ամփոփելով այս բոլոր շնորհակալությունները և երախսիքի խոսքերը երախսիքագիրության ամենախորը, խոնարի երախսիքի խոսք եմ ուզում ասել ազգիս Վեհափառ Հայրապետին, Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսին, ով մի անգամ ևս ինձ լսելի դարձեց ևս մի հանգամանքում, մի այլ ասդիմանի վրա, որ «ով պաշտոնյա, ուր մեր Տերն է, դու ևս այնքեղ պիտի լինես», եպիսկոպոսական արդեն այսպիսի բարձր ասդիմանի ծառայության մեջ:

Այսօր, այս Ս. Խորանի վրա, իմ և իմ ամբողջ թեմի հավատարմությունն եմ ցանկանում հայունել Ամենայն Հայոց Հայրապետին և Մայր Աթոռ Ս. Էջմիածնին՝ հսկակ գիրակցությամբ, որ կյանքը խավարի կյանք պիտի լինի մեզ համար, եթե չլինի Մայր Աթոռը, եթե չլինի Ամենայն Հայոց Կաթողիկոսությունն իր գահակալով: Մենք այս դարձարար զավակներն ենք, մենք հյուրեր չենք այսքեղ, կենքորներ չենք այսքեղ, գործավորներ չենք այսքեղ, այլ ենքու ու միգի զավակներն ենք այս մեծ դարձարար զավակների: Ներկա-

բար, այս Սուրբ Սեղանի վրա, Շխոտսի իշման վայրի վրա կանգնած դարձյալ իմ երախտագիտությունը և հավաքարմությունն եմ հայփնում, որ Ամենայն Հայոց Հայրապետն այսպիս վճորինեց մեզ համար: Թող Ասրված իրեն երկար կյանք, արևշագություն տա՝ զործելու համառությամբ, կամքով և աղոթքով, որպեսզի կյանքը մեր երկրում և ընդհանրապես մեր Եկեղեցու կյանքը իրական օջախ դառնա, և մարդիկ ոչ թե հոգնած հետանան, այլ զգասպությամբ հետք վերադառնան դեպի իրենց հոգևոր հայրենիքը:

Ամիսին վերստին ցանկանում եմ վստահեցնել և համոզված լինելով ասել, որ քառզիս համար բնաբան ընդուրած ավելացրած ականական խոսքը, որը հնչում է ամեն մի պաշտոնյայի համար, այսօր առավել ուժգնությամբ գալիս է դեպի ինձ, և մեր ձգությունն է՝ հարազար մնալ այս զործին, երբեք չարագավորել Ասրծո անունը և ոչ էլ այն տան անունը, որպեսից մենք բոլորս դուրս ենք եկել:

«Ճնորհը, սէր և խաղաղութիւն եղիցի ընդ ձեզ և ընդ ամենինեւանդ ամէն».